Այս մահալումն էր գտնվում և ձախափնյա կամ Վերին Սիսիանը, որտեղ էին Հաջի-Աղալար-բեկի կալվածքները՝ Շուքարը, Անգեղակոթը, Ղարաքիլիսան, ապա Սիսավանը (ներկայումս Սիսիան), Շաքին։ Նրան այստեղ պատկանող 17 բնակավայրերից 7-ը գյուղեր էին, մնացած 10-ը՝ ձմեռանոցներ։ Այստեղ բնակվող 432 ծխից միայն 32-ը հայ էին, մնացած 400-ը՝ թուրք։

Սիսիանի մահալին պատկանող բնակավայրեր պիտի համարել և պորուչիկ Սաֆար-Ալիբեկի 16 բնակավայրերը— Վաղուդի, Տուլորս, Աղքենդ, Թազակերտ, և այլն, Որոտնա գետի և նրա Այրիչայ ու Սիսիան օժանդակների հովիտներում ղետեղվածները։ Նրանցից 5-ը հայաբնակ էին, 11-ը՝ թրքաբնակ-վերջիններից 4-ը ձմեռանոցներ էին։ Այս բեկի հողերի վրա ապրող 233 ծխից 66-ը հայ էին և 167-ը՝ թուրք։

Մահալը հարևան մահալներից ավելի էր կորցրած իր նախկին հին բնակչությունը։

Տաթևի մահալ. մելիքը նստում էր Տաթևում. այդ ժամանակ միևնույն մելիք Պողոսն էր, Օրբելյանների տոհմից։ Մահալի սահմանների մեջ էր գրեթե ամբողջ այժմյան Գորիսի վարչական շրջանը Շինուհայր (Շնհեր), Խոտ, Հալիձոր, Լոր, Տանձատափ, Քարահունջ, Գորիս, Կյորու, Խնձորեսկ, Ալիղուլիշեն և այլն։ Ամբողջապես հայաբնակ մահալ էր։ Այստեղի 698 ծխից, որոնք ղետեղված էին 13 գյուղերում, միայն 25-ը թուրք էին, մնացած 673-ը՝ հայ։

Այս մահալումն էին գտնվում Հաջի-Աղալար-բեկի եղբայր Հաջի-Բեգլար-բեկի 2 գյուղերը և 2 ձմեռանոցները 150 ծուխ թուրք բնակիչներով, նաև երրորդ եղբոր՝ կապիտան Ռուստամ-բեկի և նրա մոր 6 գյուղերը, որոնց մեջ՝ Կոռնիձոր, Յերիշեն (Գեղիշա) և 9 ձմեռանոցները 447 ծխերով—137-ը հայ և 310-ը թուրք. գտնվում էին և Ռուստամ-բեկի որդու, Ասատ-բեկի 3 գյուղերը՝ Տեղ, Խնածախ[5], Ղըզլ-Ղըլաղլի և 5 ձմեռանոցները 390 ծխերով, 149 հայ և 241 թուրք. վերջիններն ապրում էին բոլորն էլ ձմեռանոցներում։

Կյուպարայի մահալ. կառավարիչը՝ միևնույն մելիք Փարսադանը նստում էր Ագարակ գյուղում։ Մահալի մեջն էին նաև Զափնի, Սևաքար, Արծվանիկ (Երիցվանիկ), Խդրանց (Սիրքաթաս), Ըրկենանց ((Մյուլկաշան), և այլ, ընդամենը 6 գյուղերը, բոլորն էլ հայաբնակ 56 ծխով։

Աճանան. մահալ թուրք. կառավարում էր Առաջաձորում նստող մելիք Ստեփանը՝ մելիք Հուսեյն-Ղուլիի «տեսչության ներքո, որը նրանից ավագ էր»[6]։

Մահալը ընդգրկում էր նաև Խալաջ, Նորաշենիկ, Խոտանան, Դովրուս, Խլաթաղ (Ախտախանա) հայաբնակ և Կարատղա, Զորանլու և Օխտար թրքաբնակ գյուղերը և ուներ այս 9 բնակավայրերում 45 ծուխ հայ և 22 ծուխ թուրք, ընդամենը 67 ծուխ բնակիչ։

Բարգուշատի մահալը տարածվում էր Աճանան-Ողջի գետի ձախակողմյան օժանդակ գետի ստորին հոսանքից մինչև Բազարչայի, այստեղ Բարգուշատ կոչվող գետի, Բայդաղ գյուղից մինչև Խոջագյան, իր նախկին բնակ-

---

[5] Венкли.

[6] «Под смотрением мелика Гуссейн-Кули, так как он старший». Ավագ բառը պետք է հասկանալ ոչ այն իմաստով, որ Հուսեյին-Ղուլին ընտանիքի ավագագույն անդամ էր, այլ ավագ էր իր լիազորություններով։ Մելիք-Ստեփանյանների ծագման մասին գավառում պահպանված ավանդություններն ասում են, որ այդ մելիքական տունը նոր է ծագել։ Ստեփանը մելիքություն է ստացել Ղարաբաղի խանից որպես շնորհ իր ցույց տված հավատարմության և առանձին ծառայության համար։